

Ասուլիսի արձանագրությունը

ՀԱՅ-Հայաստան ծրագրին առաջին ֆինանսական հատկացմանը նվիրված մամուլի ասուլիս

Ելույթներ

Էնթոնի Գոդֆրի – Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար

- Շնորհավորեց առաջին դրամական հատկացումը ստանալու կապակցությամբ: Նա նշեց, որ Հայաստանը հաջողությամբ կատարել է Հազարամյակի մարտահրավեր ծրագրի առաջին ֆինանսական հատկացման համար պահանջվող (մոտ 1,4 մլն. դոլար) նախապայմանները եւ որ ծրագիրը շոշափելի արդյունք կապահովի գյուղական բնակչության շուրջ 75 տոկոսի համար: Էնթոնի Գոդֆրին շնորհավորեց Հայաստանի ժողովրդին եւ կառավարությանը գյուղական աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրի մեկնարկի կապակցությամբ, նշեց, որ կառավարությունը պետք է բարձր ցուցանիշներ ապահովի նախ եւ առաջ արդարացի կառավարման ոլորտում, որպեսզի Հայաստանը շարունակի ստանալ ֆինանսական միջոցներ: Այդ առումով դեսպանի պաշտոնակատարը լավատես է եւ հուսով է, որ Հայաստանը կկատարի իր հանձնառությունները:

Արա Յովսեփյան – ՀԱՅ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

- համառոտ ներկայացրեց ծրագրի նախապատմությունը սկզբից մինչեւ առաջին դրամական հատկացման պահը, ինչպես եւ ըստ ոլորտների բաշխվելու գումարները, որքան է կազմել առաջին դրամական հատկացումը: Անդրադարձավ ՀԱՅ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմի ձեւավորմանը, ասաց, որ արդեն պատրաստ է 5-ամյա գործունեության համար անհարժեշտ ֆինանսական եւ աշխատանքային պլանը, թաստաթղթերի իրավական փաթեթը, ծրագրերն իրականացնելու համար կառավարության հետ կնքվել են գնումների, հատկացումների եւ կառավարման մասին համաձայնագրեր:

Ալեքս Ռասին – ՀԱԿ Հայաստանի ծրագրի տնօրեն

- ողջունեց, որ ծրագրի ուղղվածությունն ամբողջությամբ ձեւավորվել է ՀՀ կառավարության կողմից, այդ թվում եւ այն, որ շեշտադրումն արվել է գյուղական համայնքների վրա: Գյուղերին, ֆերմերներին, ագրոբիզնեսին աջակցելու ընտրությունը կատարվել է առանց ԱՄՆ կառավարության ուղղորդման:

Լեոն Բարսեղյան – ՀԱՅ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի անդամ

- ներկայացրեց շահառուների խորհրդի դերը ՀԱՅ-Հայաստան ծրագրի իրականացման գործում եւ վստահեցրեց, որ շահառուների խորհրդից ոչ ոք աշխատավարձ կամ հոնորար չի ստանում եւ ծրագրի հետ կապված որեւէ անձնական շահագրգռություն չունի: Շահառուների խորհրդի միակ խնդիրն է հետեւել, որ միջոցները նպատակային ծախսվեն եւ հասնեն թիրախային խմբերին:

Ջոնաթան Սթարք - «Կասկադ Յոլդինգի» գլխավոր գործադիր տնօրեն

- Նշեց, որ ծրագրի ֆինանսական սպասարկումն իրականացնում է «Կասկադ բանկը», որն ընտրվել է հանրապետության 18 առևտրային բանկերի միջև հայտարարված մրցույթի արդյունքում:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ *հնչած հիմնական հարցերը*

1. «Հայկական ժամանակ» օրաթերթ. հարցն ուղղվեց Էնթոնի Գոդֆրիին:
Ինչով է պայմանավորված պարոն Գոդֆրիի լավատեսությունը կապված Հայաստանի ստանձնած պարտավորությունները հաջող կատարման հետ:
 - Հայաստանի կառավարությունը հրապարակային հանձնառություն է ստանձնել եւ պետք է ապահովի գործունեության բարձր ցուցանիշներ արդարացի կառավարման, մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու եւ տնտեսական ազատությունները խթանելու ոլորտում, որպեսզի շարունակի ՀՄԿ-ից ֆինանսական միջոցներ ստանալ: Հայաստանի որոշ ցուցանիշներ շատ լավն են, բայց տակավին պահպանվում է մտահոգությունը քաղաքացիական ազատությունների եւ իրավունքների ոլորտներում տիրող իրավիճակի առումով:
2. «Լրագիր» էլեկտրոնային պարբերականի հարցը կրկին ուղղված էր Էնթոնի Գոդֆրիին եւ կրկին քաղաքական բնույթի էր: Մի երկրում, որտեղ հեռարձակվող լրատվամիջոցները գտնվում են նախագահի վերահսկողության տակ, կարելի՞ է խոսել ազատ, արդար ընտրական գործընթացների մասին, հետաքրքրվեց լրագրողը:
 - Արդարացի կառավարման գնահատականի հարցում մենք հիմնվելու ենք Համաշխարհային բանկի գնահատականների վրա, պատասխանեց Գոդֆրիին: Մամուլը եւս իր դերը կունենա, իսկ ընտրություններին ներկա կլինեն միջազգային դիտորդներ: Միայն ժողովրդավարական բարեփոխումները շարունակելու, այդ թվում 2007 եւ 2008 թվականների ընտրություններում ազատ եւ արդարացի գործընթացներն ապահովելու միջոցով Հայաստանը կկարողանա երաշխավորել 236 միլիոն դոլար արժողությամբ այս ծրագրի շարունակականությունը:
3. Հայաստանի երկրորդ հեռուստաալիքի հարցը Արա Հովսեփյանին էր ուղղված եւ վերաբերում էր ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացվելիք կոնկրետ ծրագրերին:
 - Արա Հովսեփյանը համառոտ ներկայացրեց, թե ինչ աշխատանքներ են տարվում ճանապարհաշինության, ոռոգման եւ ջրից դեպի շուկա բաղադրիչի հետ կապված, որ կան արդեն կնքված կոնկրետ պայմանագրեր, օրինակ ճանապարհաշինության բնագավառում շվեդական SWEKO կազմակերպության հետ, հայտարարված են

մրացույթներ ոռոգման, ջրից դեպի շուկա բաղադրիչի, մոնիտորինգի ու գնահատման, բնապահպանության ծրագրերի մասով:

4. «Առավոտ» օրաթերթի թղթակիցը հիշեցրեց ՀՄԿ նախագահ Ջոն Դանիլովիչի մտահոգությունը կապված ընտրական գործընթացների հետ եւ հարցն ուղղեց Ալեքս Ռասինին:

- Չնայած միջազգային հանրության դիտարկմամբ 2005-ի ընտրություններն անցել են կեղծիքներով, մենք չէինք կարող սպասել մինչեւ 2007-ի խորհրդարանական կամ 2008-ի նախագահական ընտրությունների ավարտը տեսնելու՝ արդա՞ր անցան դրանք թե ոչ: Մենք մտահոգված ենք առաջիկա ընտրություններով, բայց ծրագիրը սկսված է եւ մենք հույս ունենք, որ դրանք հնարավորություն կտան կառավարությանն ու հայ ժողովրդին առաջընթաց արձանագրել:

5. Ա1+ -ի հարցը վերաբերում էր ծրագրի կողմից անցկացվող մրցույթների ընթացակարգին, դրանց թափանցիկությանը, ինչպես նաեւ ՀՄԿ ամերիկացի ներկայացուցիչների կողմից իրականացվելի աշխատանքների որակի վերահսկողությանը:

- Արա Հովսեփյանը պարզաբանեց մրցույթների իրականացման ընթացակարգը եւ խոսեց մրացութային հանձնաժողովների կազմի ու աշխատանքի թափանցիկության մասին:

- Իսկ Ալեքս Ռասինը ավելացրեց, որ Ամերիկայի ժողովուրդը 236 մլն. դոլարի ներդրում է անում Հայաստանի ապագայի մեջ «Մենք շահագրգռված ենք, որ միջոցները ճիշտ օգտագործվեն: Վստահ եմ, որ թափանցիկության մեխանիզմները թույլ չեն տա, որ միջոցները նպատակային չօգտագործվեն»: Այդ նպատակով ՀՄԿ-ն ծրագրի ողջ ընթացքում իրականացնելու է եռամսյակային, կիսամսյակային եւ տարեկան աուդիտներ եւ մասնագետների միջոցով հետեւելու է աշխատանքների որակին: